**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-257-14.08.2019-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-257-14.08.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծով առաջարկվում է առաջին ծննդաբերության ժամանակ երկվորյակ երեխաներ ծնվելու դեպքում յուրաքանչյուր նոր ծնված երեխային տալ ծննդյան միանվագ տարբերակված նպաստ՝ երկրորդ երեխայի կարգաթվով սահմանված միանվագ նպաստի կրկնապատիկի չափով:

Համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական նպաստը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից պարբե-րաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է: Օրենքով սահմանված են նաև պետական նպաստների տրամադրման նպատակները:

Ակնհայտ է, որ նշված նպատակների շրջանակներում որևէ կատեգորիայի անձանց տրվող պետական նպաստի չափի ցանկացած ավելացում դրական է ազդելու այդ անձանց սոցիալական վիճակի վրա:

Ըստ այդմ՝ յուրաքանչյուր այդպիսի բարձրացում (փոփոխություն) պետք է դիտարկել պետական նպաստների ոլորտում վարվող քաղաքականության համատեքստում՝ հաշվի առնելով առաջնահերթությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների ծախսարդյունավետությունը:

Շարադրվածի կապակցությամբ կարծում ենք, որ լրացուցիչ քննարկման կարիք ունի առաջարկվող փոփոխության բովանդակությունը՝ փոխկապակցված պետական նպաստների տրամադրման նպատակներին:

Մասնավորապես, երեխայի ծննդյան միանվագ նպաստը նախ և առաջ միտված է ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, ինչը նաև Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթություններից է, իսկ այդ նպաստի՝ որոշակի ծախսեր

հատուցելու կամ ընտանիքի կենսամակարդակի բարձրացման գործառույթներն ավելի շատ ածանցյալ են:

Հարկ ենք համարում նշել, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստի ոլորտում ցանկացած փոփոխություն պետք է բխի նշված մոտեցումներից՝ նախ և առաջ ներազդելով ընտանիքի (անձի) վերարտադրողական վարքագծի վրա:

Առաջարկվող փոփոխությունը որևէ կերպ չի կարող ազդեցություն ունենալ ընտանիքի (անձի) վերարտադրողական վարքագծի վրա:

Հաշվի առնելով շարադրվածը՝ անընդունելի ենք համարում թե առաջարկվող արտոնությունը երկվորյակներ ծնվելու դեպքերի վրա տարածելը, թե առաջին ծննդաբերության ժամանակ այն կիրառելը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի համաձայն՝ նախորդ ժամանակահատվածում արձանագրված ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու նպատակով նախատեսվում է մշակել և կյանքի կոչել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքներին աջակցության նոր ծրագրեր, որոնց շրջանակներում և ըստ անհրաժեշտության նախատեսվում է վերանայել գործող ծրագրերը:

Տեղին է նշել նաև, որ ժողովրդագրական իրավիճակի բարելավման համար իրականացվող աշխատանքների շրջանակներում ներկայումս քննարկվում է 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափն ավելացնելու հարցը՝ այն երեխայի ծննդյան կապակցությամբ առաջացող միանվագ ծախսերի հետ համադրելի դարձնելու նպատակով:

Ամփոփելով՝ ասենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքի նախագծի ընդունումը գտնում է ոչ նպատակահարմար:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2019 թվականի N 1321 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Սմբատ Սահյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-257-14.08.2019-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 18
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 24-րդ հոդվածում լրացնել նոր 8.1-րդ մաս.

«8.1 Առաջին ծննդաբերության ժամանակ, երկվորյակ երեխաներ ծնվելու դեպքում՝ յուրաքանչյուր նոր ծնված երեխային տրվում է ծննդյան միանվագ տարբերակված նպաստ՝ երկրորդ երեխայի կարգաթվով սահմանված միանվագ նպաստի կրկնապատիկի չափով»:

**Հոդված 2.** Օրենքի 25-րդ հոդվածում լրացնել նոր 7.1-րդ մաս.

«7.1 Սույն օրենքի 24-րդ հոդվածի 8.1-րդ մասով սահմանված դեպքում՝ յուրաքանչյուր նոր ծնված երեխայի համար ծննդյան միանվագ տարբերակված նպաստը վճարվում է ուղղակի կարգով»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հիմնավորում**

Համաձայն գործող օրենքի և ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 6-ի N275-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ առաջին ծննդաբերության ժամանակ երկվորյակ երեխաներ ծնվելու դեպքում պետական բյուջեից հատկացվում է երկրորդ երեխայի ծննդյան կարգաթվին համապատասխան՝ 150 000-ական ՀՀ դրամ: Իրականություն է այն փաստը, որ առաջին ծննդաբերության ժամանակ երկվորյակ երեխաներ ունենալու դեպքում՝ երեխաներին խնամելու և մեծացնելու հետ կապված ծախսերն էապես տարբեր են, քան օրինակ՝ մեկ երեխայից հետո երկրորդ երեխայի ծնվելը: Այսինքն՝ երկվորյակների համար՝ հագուստ, սնունդ և այլ անհրաժեշտ ապրանքներ ծնողները պետք է գնեն կրկնակի: Ըստ այդմ, հաշվի առնելով վերոնշյալը՝ ողջամիտ և արդարացի կլինի առաջարկվող օրենքի նախագծի ընդունումը, որի ազդեցության գնահատականը, միանշանակ, լինելու է դրական:

**Ակնկալվող արդյունքը**

Օրենքի ընդունումը հիմք է հանդիսանում ՀՀ քաղաքացիների՝ պետության նկատմամբ բարձր վստահության, սոցիալապես պաշտպանվածության համար: Այս կարգավորումը ևս մեկ դրական ազդեցություն կունենա և կնպաստի ծնելիության մակարդակի բարձրացմանը, որը բխում է երեխաների թվի աճի առաջընթացին ուղղված՝ պետության կողմից որդեգրած քաղաքականության տեսլականից: